

# ՄԱՅՐ ՄԷ Կ'ԵՐՍԷՐ

Զաւա՛կս, կ'երբքաւ...:  
Սրբնքացի մը երկաթէ երկար ուղիւ՛  
Բեզ կը տանի ճակատագրին քու անձանք...  
Անա՛ ճամբան ալ իմ հոգեոյս՝  
Մզմանանքին պէս անողոք,  
Սպասումի եւ անձկութեան մշուշին մէջ՝  
Կոծումներով մոռցումս  
Կը բարձրանայ անյուսօրէ՛ն ու կ'երկարի...  
Սպասումի եւ անձկութեան  
Քօզն աչքերու, ծա՛ղեր, անբախանց  
Պիտի մնա՛մ ես վշտահար, բոյլ ու անգոր  
Անգորութիւն՝ որ վատութեամբ  
Կը ծանրանայ արդ օրէ օր սրտիս վրայ...  
Երե՛ք անգամ սուրբ արդէն  
Հնարքացն ու սողա՛ց հեռուն...  
Ու մնացի ես միայնակ՝ քարափին վրայ  
Ու կը նայիմ մեծ պարապին՝  
Աւելի՛ խոր՝ քան Մահն ինքնին...  
Երկաթէ ձեռք՝ մ'անհունին դէմ՝  
Զինուոր գաւկիս ճանապարհորդ՝  
Հակառակորդ արդ կը հիւսէ...  
Մեծ Պատմութիւնն ապագայի՝  
Իր աղուակա՛ն գաբունին հետ,  
Իմ արիւնիս կաթիլներով, արցունքներովս  
Կը ստորագրէ...

\* \* \*

Զաւա՛կս կ'երբքաւ...  
Ես՝ միայն լուռ արցունքներով  
Վերջին անգամ քեզ կը գրկեմ...  
Ես որ կեանքիս պահերուն հետ,  
Մահու, կեանք պայքարներով  
Կեանքի՛դ համար մահառեցայ,  
Որ շանքի՛ն դէմ սպառնացող,  
Արեւի՛ն դէմ սուր ու կիզիչ,  
Մտախոնդին դէմ նետուեցայ  
Անվա՛յս, խիզախ՝ սուկերուն դէմ մարտնչելով,  
Քե՛զ պահելու միշտ անվերանգ,  
Պաշտպանելու փոքրիկ մարմինդ  
Յուրտէն, տենդէն ու վերքերէն...  
Արդ կը մնամ հոս միայնակ,  
Եւ արցունքի նման լըռիւն,  
Գիշերուա՛ն պէս ծա՛ղեր, անհաղորդ...  
Ու մութին մէջ անապաւէն...  
Կը սպասեմ գո՛ւր ու ցաւագին...:  
Խորխորատներ՝ կը տատանին  
Շուրջս, ամէն կողմ...  
Նորէն վերջուշ լացող անցեալս

Նոր վշտիս հետ կը կողկողի...  
Կը քաւալի՛ն հագար կարօտ՝  
Արեանս պղտոր գիշերին մէջ,  
Օ՛, դար սուգի, արարքներու անմարդկային,  
Ոյսի, ջարդի  
Եւ վախերով գարիւրական...:

\* \* \*

Ես կը լըսեմ հիմա ե՛րբք միմակութեան,  
Ու կը տեսնեմ անձկակարօտ  
Էութիւններ՝ սրնարիս մօտ...  
Կը կարկառի՛ն ձեռքեր հագար,  
Հէ՛ք մայրերու՝ դէպի երկինք՝  
Խո՛ր աղօթքով վաւեր գութի՛...:  
Ու բռնաւորն հիւանդագին  
Խռատ հագով՝ կ'իյնայ բարձին  
Քնամալով, չըլսելով,  
Աղերս, աղօթք քախմագին...  
Անկարող է, բայց դեռ կ'իշխէ իր դաւերով...  
Բայց կը կասի հոգիս խոր՝  
Կրաւորական ամէն շարժում...:  
Եւ ամէն յոյզ՝ ըմբոստանի՝  
Խուլ բարկութեան վրէժխնդիր  
Արիւններու կը վերածուի...  
Ու վշտիս մէջ, խօսքերս հատու՝  
Ալիք ալիք կը լեռնանան...  
Ու կը զինեն հոգիս՝ տարբեր  
Ապրումներու զգայնութեամբ...  
Եւ աշխարհի մ'օրէնքներով նըրազործ  
Եւ տեսիլով խաղաղութեամբ ազնւական...  
Եւ արցունքներս՝ աչքերուս խոր՝  
Տեղի կու տան ովկիաններու  
Ընդվզումի՛ն ու բարկութեան...  
Արդարագոտ կոհակներուն փրփրաստան...  
Մայրե՛ք, մայրե՛ք  
Զինուորներով դեռահասակ,  
Քրտանամեա՛յ մանուկներու անտիրական...  
Դո՛ւք ալ ինձ պէս կը սասանիք  
Ըմբոստանան կայծակներով՝  
Ի տես մեկնող ճեպընթացին՝  
Անհանգըրա՛ն...  
Մեր միսերէն պոկուած գանձով...:  
Ամէ՛ն շարժում...  
Եւ ամէն յոյզ արդ բարկութեան,  
Ըմբոստանի խուլ վրէժի  
Արիւններուն կը վերածուի  
Ու վրշտիս մէջ խօսքերս հատու՝  
Ալիք ալիք կը լեռնանան...

Ու կը զինեն հոգիս տարբեր  
Ապրումներու զգայնութեամբ...  
Խաղաղութեամբ նըրազործ,  
Իր ըստեղծած օրէնքներուն  
Տեսլականով մարդկայնական...  
Եւ արցունքներս՝ աչքերուս խոր՝  
Տեղի կու տան ովկիաններու  
Դո՛ւք բարկութեան  
Կոհակներուն փրփրաստան...:

\* \* \*

Մայրե՛ք, մայրե՛ք զինուորներու  
Քսանամեայ զինուորներով անտիրական...  
Դո՛ւք ալ ինձ պէս կը սասանիք  
Ըմբոստանին կայծակներով,  
Ի տես մեկնող ճեպընթացին՝  
Անհանգըրա՛ն...  
Մեր հոգիէն բաժան, բաժան  
Մեր միսերէն արիւնլուայ  
Պոկուած լոյսով...  
Մայրե՛ք, մայրե՛ք...  
Դո՛ւք ալ ինձ պէս կը դողդոջէք  
Ըմբոստանի,  
Ատելութեան  
Շանքաշտա՛ւ կայլակներով...  
Դո՛ւք ալ ինձ պէս կը գինովնաք  
Տառապանքին անյոյս բոյնով  
Համբերութեան ա՛լ ըսպառած  
Բաժակներուն  
Վերջի՛ն, վերջի՛ն  
Կաթիլներով...:  
Ինչո՞ւ սակայն  
Անդունդներով նըման լո՛ւռ եմք  
Ու վատութեան նըման անձայն...  
Մայրե՛ք, մայրե՛ք,  
Ոչխա՛րն անգամ  
Յափըշտակուած իր գառնուկին  
Ողբին ի լուր՝  
Կը սասանէ լեռներն ամէն  
Իր մայիւնով... իր վայելմով...:  
Թռչուններն իսկ  
Երա՛մ, երա՛մ վա՛ր կը բափին

Իրենց բոյներն առեւանգող  
Բիրտ ճանկերուն դէմ՝ գայրագին...  
Ու վարդերն իսկ բուսներու մէջ  
Սուր փուշերով արիւնլով  
Անգութ ձեռքերն  
Կը պաշտպանուին...:

\* \* \*

Միմիայն մենք,  
Մայրե՛ք բշուռ,  
Հագար հագար  
Տարիներէ ի վեր անկար՝  
Կը տըլայտի՛նք մահուան դիմաց  
Յան՛ւն կեանքին...  
Ու չե՛նք խորհիր փոխել կարգերն  
Հինցա՛ծ խաբխուլ ու շահագործ մեր աշխարհին  
Օրէնքներուն հըրէշածին...  
Մեր ձեռքերով՝ աստուածային  
Զենք արձակել խորհրդանիշ աղանձներն,  
Ու կը բողբոջէ որ կրակին  
Արկերուն հետ խաղա՛ն, այրի՛ն  
Քսանամեայ մեր մանուկները քանկագին...  
Ու չե՛նք խորհիր խաղաղութեան...  
Աստուծոյ՛ն, մագիլներով  
Ու մեր արեա՛ն կաթիլներով,  
Արցունքներով, ճիշով, ողբով,  
Մեր գիրքերով ու երգերով,  
Սիրո՛յ ուժով՝  
Փոխել ընդմիշտ  
Թափուն դաւերն օրէնքներուն,  
Ահեղ դեւերն այն բռնաւոր՝  
Կաշկանդողներն Ազաւնիին՝  
Խաղաղութեան երախտաւոր...  
Դո՛ւք խորհա՛ծ էք քարափին վրայ,  
Մայրե՛ք տրտում, քէ ճեպընթացն  
Ա՛հ, ո՞ւր կ'երբքա՛յ, ո՞ր պարտութեան...  
Դո՛ւք հարց կու տաք, կ'ըսէք ինձի —  
Թէ խորհա՛ծ եմ մայրերու Մօր՝  
Աստուածածնին եւ իր սուգին...  
— Բայց մեր որդիքը, մայրե՛ք հէ՛ք,  
Յարութիւն չե՛նք առնել երբեք...:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ